

**Նանա Բարջաձե-Միխանաշվիլի**

*Նինոծմինդայի շրջանի Գանձայի Շոթա Ռուսթավելու անվան #2 հանրային դպրոցի վրացերենի, որպես երկրորդ լեզվի և երկլեզու ուսուցման մանկավարժ*

**ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ, ՈՐՊԵՍ ԵՐԿԼԵԶՈՒ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑ**

Այլևս ոչ ոք չի վիճում այն մասին, թե ինչ մեծ նշանակություն ունի էթնիկ փոքրամասնությունների համար բազմալեզու կրթությունը, պետական լեզվի տիրապետումը նրանց քաղաքացիական ինտեգրման և միևնույն ժամանակ սեփական ինքնության պահպանման և զարգացման համար: «Բազմալեզու կրթության քաղաքականությունը պետական քաղաքականության մասն է, որը նկատի ունի, որ պետության մեջ ստեղծվի ընդհանուր հաղորդակցական լեզու և այդ լեզվի տիրապետումը լինի նրա երաշխիք, որ տեղի ունենա էթնիկ փոքրամասնությունների արդյունավետ քաղաքացիական ինտեգրում հասարակությանը: Երկլեզու կրթությունը, միևնույն ժամանակ, հանդիսանում է գործիք, որ բոլորին տրվի մասնակցության և մասնագիտական հաջողության հասնելու հավասար հնարավորություն» (Լիզիտա Գրիգուլե):

Երրորդ տարին է, որ մեր դպրոցը (տնօրեն՝ Սարգիս Դուրգարյան) ընգրկված է երկլեզվյա ուսուցման մեջ և իրականացնում է բազմալեզու կրթության փորձարկային ծրագիր, ինչը կայանում է նրանում, որ աշակերտները հնարավորություն ունեն կրթություն ստանալու ընտրված առարկաներից մայրենի և պետական լեզուներով: Տարրական աստիճանում այս

առարկաներն են. արվեստ, երգ (IV դասարան), ֆիզկուլտուրա (III դասարան), Վրաստանի պատմություն (VI դասարան), իսկ բարձր դասարաններում՝ Վրաստանի աշխարհագրություն (IX դասարան) և քիմիա (XI դասարան): Աշակերտը յուրացնում է առարկայի բովանդակությունը և վրաց լեզուն ինտեգրված՝ հայոց լեզվին զուգահեռ (70 % հայերեն, վրացերեն՝ 30 %) առարկայի և վրաց լեզվի ուսուցիչների հետ: Իսկ քիմիան միայն առարկայի ուսուցիչն է դասավանդում երկու լեզուներով էլ:

Գործնական փորձը ցույց տվեց, որ դասի հետ մեկտեղ ոչ պակաս կարևորություն ունեն արտադասարանական միջոցառումները, որոնք նպաստում են դասի ժամանակ ձեռք բերված գիտելիքի գործնական կիրառությանը, բառապաշարի հարստացմանը, քերականական կառույցներ կազմելուն և հաղորդակցության կարողության զարգացմանը, եթե չխոսենք ստեղծագործական կարողության և ինքնուրույն մտածողության զարգացման մասին: Այն նպաստում է ուսուցիչների և աշակերտների, ուսուցիչների և ծնողների միջև համագործակցությանը, դրական հարաբերությունների ձևավորմանը, մոտիվացիայի բարձրացմանը ոչ միայն

աշակերտների, այլ ծնողների մեջ՝ վրաց լեզու սովորելու համար:

Նկատի ունենալով այս ամենը՝ միշտ փորձում ենք պլանավորել զվարճալի, ինտերակտիվ, ինտեգրված երկլեզու միջոցառումներ, լինել ուղղորդողներ, օգնել աշակերտներին ճիշտ կիրառել դասի ժամանակ ստացած գիտելիքը և ընդհակառակը՝ միջոցառումների ժամանակ ստացած գիտելիքը կիրառել դասի ժամանակ, ընդգրկվել միջոցառման նախապատրաստման մեջ, բացի այդ նախատեսում ենք աշակերտների տարբեր հնարավորությունները, վարքի կանոնները, գիտելիքը, հետաքրքրությունները, և այդպես բաշխում ակտիվությունները, որպեսզի բոլորի հանդեպ մեր վերաբերմունքը լինի անաչառ:

Պլանավորում ենք ինչպես դասարանական, այնպես էլ դպրոցական միջոցառումներ, որի գլխավոր բաղադրամասի ենք վերածել ծնողին: Նոր պահանջների հիման վրա, ՅՈՒՆԵՍԿՕ-ի գնահատմամբ, ժամանակակից ուսուցից պահանջվում է համագործակցել ոչ միայն ուսուցիչների հետ, այլև՝ ծնողների, նրանց ընդգրկել ակտիվությունների մեջ:

Ծնողների ներգրավվածությունը նշանակալի բաղադրամաս է էթնիկ փոքրամասնությունների կրթության հետ կապված ծրագրի հաջողության համար: Քանի որ աշակերտի վրա ոչ ոք և ոչինչը չի կարող ազդել այնպես, ինչպես վրաց լեզվի ուսուցմամբ հետաքրքրված ծնողը, այդ պատճառով ոչ մի միջոցառում չենք անցկացնում առանց ծնողների ներգրավվածության: Աշխատում ենք, որ նրանք ոչ միայն պասսիվ ունկնդիրներ լինեն, այլև ակտիվորեն ընդգրկվեն միջոցառման նախապատրաստման և երբեմն նույնիսկ ընթացքի մեջ:

Արվեստի և երգի ուսուցիչների՝ վանիկ Թևանյանի և Սուսաննա Պողոսյանի հետ անց ենք կացրել ինտեգրված երկլեզու միջոցառում «Ոսկե աշուն»: Արվեստի դասի ժամանակ աշակերտները նկարեցին, ծեփակերտեցին միրգ-բանջարեղեն, սովորեցին համապատասխան վրացերեն բառապաշարը, բանաստեղծություններ: Երգի դասին սովորեցին վրացերեն և հայերեն երգեր: Միջոցառումը նախապատրաստելիս և ոչ միայն միջոցառման նախապատրաստման ժամանակ միշտ նկատի ենք ունենում «պաշտպանված ուսումնական միջավայրի ձևավորման մոտեցումը» (Լիզիտա Գրիգուլե): Աշխատում ենք ստեղծել մշակութային և լեզվական տեսակետից հավասար միջավայր, որ նյութերը լինեն երկու լեզուներով, ինչը նպաստում է մշակույթների միջև հարգանքին: Այդպես էր նաև այս միջոցառման ժամանակ:

Ծնողների օգնությամբ ձևավորեցին միջավայրը, շարեցինք ընկույզը, պատրաստեցինք շփոթը և թաթախեցինք (սուջուխ պատրաստեցինք): Աշխատում ենք միջոցառումների համար ընտրել ուրախ ակտիվություններ, խաղեր, օրինակ՝ մայրերի հետ հանդիպման ժամանակ մորը հանձնարարվում էր աշակերտների կողմից մոր մասին վրացերեն գրված շարադրություններում ճանաչել իրենց և այքերը փաթաթած գտնել իր երեխային: Այս ժամանակ հաղորդակցությունն այս կամ այն չափով վրացերեն էր ընթանում:

Ամեն տարի անց ենք կացնում ամանորյա դիմակահանդես, «Մայրության տոնին նվիրված երեկոներ», Վրաց լեզվի օրվան և մայիսի 26-ին նվիրված միջոցառումներ, կազմակերպում ենք հանդիպումներ հրավիրված հյուրերի հետ: Հաճախ հյուր են նաև ծնողները:

Հանդիպում ունենք նաև գյուղի բժշկուհու՝ Հասմիկ Դուրգարյանի հետ, որն ավարտել է Թբիլիսիի բժշկական համալսարանը և գիտի վրացերեն, ինչը յուրօրինակ խթան էր ոչ միայն երեխաների, այլև ծնողների համար: Հանդիպեցինք ֆոտոարվեստագետ Գոգա Չանդիերիի հետ: Հանդիպումները միշտ ընթանում են հարց-պատասխան ռեժիմում:

Ավանդույթի ենք վերածել ուսումնական տարվա վերջի ամփոփիչ միջոցառումները. «Ինչպես ենք մեծացել», «Մինչ նոր հանդիպում», արշավներ, էքսկուրսիաներ: Բացի այդ, ամեն տարի հունիսի 1-ին հյուրընկալում ենք Սուրբ Նինոյի ճանապարհով գնացողներին, որոնք մեկ գիշեր մնում են աշակերտների ընտանիքներում:

Ըստ Վիգոտսկու, լեզուն ավելի հեշտ է յուրացվում կենսական իրավիճակներում, քան թե դասերի ժամանակ: Այդ նպատակով աշակերտները մեկ օր անցկացրին Նինոծմինդայի վրացական դպրոցում: Ներկա գտնվեցին դասերին և մասնակցեցին «Մենք բոլորս մեկ հայրենիք ունենք» համատեղ միջոցառման, արտասանեցին բանաստեղծություններ վրացերեն և հայերեն, կատարեցին վրացական և հայկական պարեր և երգեր: Աշխարհագրության ուսուցչի (Գաբրիել Ղազարյանի) հետ կազմակերպեցինք երեկույթ «Ճանաչենք Վրաստանը», որի ժամանակ աշակերտները ներկայացրին աշխարհագրության դասերին ստացած գիտելիքը: Աշակերտը խոսում էր երկու լեզուներով էլ: Երբեմն՝ մի աշակերտը հայերեն, մյուսը՝ վրացերեն:

Ուսուցիչների համար ընդհանրապես, և հատկապես երկլեզու ուսուցման վրաց լեզվի ուսուցիչների

համար գլխավորը աշակերտների վստահության ձեռքբերումն է և նրանց սերը: «Վստահության և սիրո մթնոլորտ է անհրաժեշտ, որպեսզի աշակերտի և սիրտը, և գիտակցությունը բաց լինեն նրա համար, ինչը մատուցվում է իրեն», - սովորեցնում է Դիմիտրի Ուզնուձեն: Իսկ ուսուցիչը դա կկարողանա միայն այն դեպքում, երբ սերն ու վստահությունը հենց իրենից բխեն: Լեզու սովորողները, աշակերտները պետք է համոզվեն, որ ուսուցիչը հարգում է, սիրում իրենց լեզուն, պատմությունը, մշակույթը և ինքնությունը: Հենց այդ պատճառով այցելեցինք Երևանի Մխիթար Մեթաստացու անվան ուսումնական համալիր (Աշոտ Բլեյան), դիտեցինք քաղաքը, եղանք Էջմիածնում: Որոշել ենք աշխարհագրության երեկո անցկացնել՝ «Վրաստանը և Հայաստանը», պատմությունից՝ «Հայոսը և Քարթլոսը եղբայրներ են եղել»:

Երկլեզու միջոցառումների նախապատրաստումը և անցկացումն ավելի է մերձեցնում մեզ երեխաների հետ:

Ավելի հաճախ է հաղորդակցությունը վրաց լեզվով և ավելի հարմարավետ է ոչ վրացալեզու ունկնդիրների՝ կոնկրետ ծնողների և համայնքի ներկայացուցիչների համար (առավել ևս, որ գյուղը հայերով է բնակեցված, այստեղ չի ապրում ոչ մի վրացական ընտանիք), բոլորս միասին անհանգստանում ենք և հուզվում, բոլորս մեկ նպատակ ունենք, մեկ աշխատանք և երազանքն էլ մեկն է՝ բոլորը հավանեն մեզ՝ Լա՛վ էր, ուսուցչուհի:

Լավ կարդացի: Ինչ լավ երգեց Կառլենը: Անին ինչ լավ պարեց: Ինչպես էի վախենում: Իսկ դու ինչպես էիր բղավում: Իսկ սա արդեն գնահատում է և քննադատություն ... ինքդ քո և միմյանց, և նաև կատարված աշխատանքի

գնահատում: Չէ որ ամեն տեսակ ստեղծագործական գործընթաց պահանջում է վերլուծություն և գնահատում, ինչին երեխաները հենց դպրոցից պետք է ընտելանան: Միջոցառումը վերլուծում և գնահատում են նաև ծնողները և հրավիրված հյուրերը, ինչն այսքան անհրաժեշտ է մեր զարգացման համար, քանի որ վերլուծության հետ մեկտեղ նաև սովորում ենք: Իսկ սովորելը ուսուցչի համար էական նշանակություն ունի: Եվ որ ամենակարևորն է, բոլոր միջոցառումները

կողմնորոշված են աշակերտին՝ աշակերտներին տրվում է երկու լեզուների գործնական կիրառության հնարավորություն: Լավ երևում է երկլեզու կրթության առավելությունը աշակերտների լեզվական և իմացական զարգացման տեսակետից: Այնպես որ, արտադասարանական միջոցառումները նպաստում են մարդասիրական, քաղաքացիական և հանդուրժող անհատի դաստիարակությանը, ինչը նաև երկլեզու ուսուցման նպատակն է:

**Nana Barjadze – Mikhanashvili**

Georgian as a second language and bilingual teaching teacher in Gandza #2 school

**Outdoor activities – as one of the way of bilingual teaching**

**AABSTRACT**

The importance of multilingual education for non Georgian population to learn a state language is not a subject of arguments in the society. On the one hand multilingual education for minorities is a way for preserving and developing identity and on the other hand to learn state language for integration in the society.

The multilingual education is a part of the state policy and it aims to create a united communicative language for the county and knowledge of the state language will be the guarantee for all citizen to involve in the social and cultural life of Georgia.

The bilingual education will be an instrument for personal and professional development. (Ligita Grigule)